

Կ-055<sup>3</sup>-07.07.2017-SSԳԲ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՀՈՂՎԱԾ 1.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի թ) կետում, 18-րդ հոդվածի վերնագրում և առաջին պարբերությունում, 28-րդ հոդվածի վերնագրում, 3-րդ և 4-րդ պարբերություններում, 33-րդ հոդվածի վերնագրում և 3-րդ պարբերությունում «արդյունաբերական նմուշի,» բառերից հետո լրացնել «բույսերի սորտերի,» բառերը:

**ՀՈՂՎԱԾ 2.** 18-րդ հոդվածի աղյուսակը լրացնել նոր 3.1 բաժնով հետևյալ բովանդակությամբ՝

«3.1 Բույսերի սորտերի հետ կապված գործողությունների գծով

|    |   |    |   |
|----|---|----|---|
| ա) | բույսի սորտի հայտ ներկայացնելու համար   | 5  |   |
| բ) | Կոնվենցիայով՝ առաջնություն խնդրարկելու համար  | 4  |   |
| գ) | բույսի սորտի նկարագրության հրապարակման համար՝ հինգ էջից ավելի յուրաքանչյուր էջի համար                                       | 2  |   |
| դ) | արտոնագիր տալու համար   | 3  |   |
| ե) | լիցենզիոն պայմանագրի գրանցման համար, եթե այն վերաբերվում է 1 արտոնագրի մի քանի արտոնագրի (մեկից ավելի յուրաքանչյուրի համար) | 10 |   |
|    |   | 5  |   |
| զ) | արտոնագրի կրկնակը տալու համար   | 1  | » |

**ՀՈՂՎԱԾ 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՀՈՂԿԱԾ 1.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի թ) կետում, 18-րդ հոդվածի վերնագրում և առաջին պարբերությունում, 28-րդ հոդվածի վերնագրում, 3-րդ և 4-րդ պարբերություններում, 33-րդ հոդվածի վերնագրում և 3-րդ պարբերությունում «արդյունաբերական նմուշների» «արդյունաբերական նմուշի» բառերից հետո լրացնել «բույսերի սորտերի,» բառերը:

**ՀՈՂԿԱԾ 2.** 18-րդ հոդվածի աղյուսակը լրացնել նոր 3.1 բաժնով հետևյալ ~~խմբագրությամբ~~ բովանդակությամբ

«3.1 Բույսերի սորտերի հետ կապված գործողությունների գծով

|    |   |    |   |
|----|---|----|---|
| ա) | բույսի սորտի հայտ ներկայացնելու համար   | 5  |   |
| բ) | Կոնվենցիայով՝ առաջնություն խնդրարկելու համար  | 4  |   |
| գ) | բույսի սորտի նկարագրության հրապարակման համար՝ հինգ էջից ավելի յուրաքանչյուր էջի համար                                       | 2  |   |
| դ) | արտոնագիր տալու համար   | 3  |   |
| ե) | լիցենզիոն պայմանագրի գրանցման համար, եթե այն վերաբերվում է 1 արտոնագրի մի քանի արտոնագրի (մեկից ավելի յուրաքանչյուրի համար) | 10 |   |
|    |   | 5  |   |
| զ) | արտոնագրի կրկնակը տալու համար   | 1  | » |

**ՀՈՂԿԱԾ 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ**

Կ-055-07.07.2017-SSԳԲ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Բույսերի սորտերի պահպանության մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և արդարադատության նախարարության առաջարկությունների

| Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը.               | Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)   | Առաջարկը (փոփոխությունը, լրացումը) ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը | Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|--|--|---|
| 1   | 2  | 3  | 4   |
| <p>ՀՀ կառավարություն<br/>Բանավոր<br/>առաջարկություն</p> | <p>1. &lt;&lt;Բույսերի սորտերի պահպանության մասին&gt;&gt; Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում &lt;&lt;հիմնվել է&gt;&gt; բառից հետո &lt;&lt;1972&gt;&gt; թիվը փոխարինել &lt;&lt;1961&gt;&gt; թվով:</p> <p>2. «Բույսերի սորտերի պահպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի.<br/>1) 1-ին հոդվածում «իրավունքի» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «անվավեր ճանաչման և» բառերը՝ նկատի ունենալով, որ օրենքի նախագծում առկա են նաև բուծողի իրավունքների անվավեր ճանաչմանը վերաբերող դրույթներ:<br/>2) 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետում «սույն հոդվածի ա. և բ. կետերում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ա. և բ. ենթակետերում» բառերով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջների:<br/>3) 3-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները կրկնում են նախագծի 1-ին հոդվածի դրույթները, քանի որ երկուսում էլ խոսքը գնում է օրենքի կարգավորման առարկայի մասին: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ „Իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, որոնց</p> | <p>Ընդունվել է<br/>Կատարվել է<br/>համապատասխան<br/>փոփոխություն</p>                                      | <p>Ընդունվել է</p>  |

համաձայն իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները:

4) 4-րդ հոդվածում «1) մասում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «1-ին մասում» բառերով, իսկ «20-րդ հոդվածի» բառերը փոխարինել «19-րդ հոդվածի» բառերով՝ նկատի ունենալով, որ սորտի անվանման մասին խոսքը գնում է 19-րդ հոդվածի դրույթներում:

5) 19-րդ հոդվածի 1-ին մասում «սույն հոդվածի 4-րդ կետով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «սույն հոդվածի 4-րդ մասով» բառերով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջների:

3. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի.

1) 1-ին հոդվածում «խմբագրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «բովանդակությամբ» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջները:

2) 3-րդ, 4-րդ և 5-րդ հոդվածներում «Բույսի» բառն անհրաժեշտ է փոխարինել «Բույսերի» բառով, քանի որ խոսքը գնում է «Բույսերի սորտերի պահպանության մասին» ՀՀ օրենքի մասին:

4. «Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի.

1) 5-րդ հոդվածում «6 տարի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «վեց տարի» բառերով՝ նկատի ունենալով «Սելեկցիոն նվաճումների պահպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները:

2) 7-րդ հոդվածն անհրաժեշտ է միացնել 3-րդ հոդվածին՝ նկատի ունենալով, որ 7-րդ հոդվածի փոփոխությունները նույնպես վերաբերում են 3-րդ և 13-րդ հոդվածներին:

3) Նախագծում անհրաժեշտ է վերանայել հոդվածների համարակալման հաջորդականությունը, մասնավորապես՝ 8-րդ հոդվածին պետք հաջորդի 9-րդ հոդվածը, այլ ոչ թե 10-րդ հոդվածը:

5.«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի.

1) 1-ին հոդվածն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով, որ 28-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված է «արդյունաբերական նմուշի» բառերը, այնինչ նախագծի 1-ին հոդվածում նշվում է «արդյունաբերական նմուշների» բառերը:

2) 2-րդ հոդվածում «խմբագրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «բովանդակությամբ» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի պահանջները: